Ինտերակտիվ քաղաք

Քաղաքը տեսանելի է

Ես **Կարեն Պողոսյանն** եմ, 17 տարեկան, AI Engineer, Full-Stack Developer և ԱԲ սերնդի աշակերտ: Մասնակցել եմ նաև տարբեր մրցույթների, օրինակ՝ SSS-ին:

«Մաքուր Երևան» նախաձեռնությանն արձագանքեցի ներքին համոզմունքով, քանի որ ինձ համար քաղաքը պարզապես փողոցների ու շենքերի խաչմերուկ չէ. այն կենդանի, շնչող միջավայր է, որն ամեն օր արտացոլում է մեր վերաբերմունքն իր հանդեպ:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Yerevan Pulse. Երևանը ցուցասրահ չէ»

Երևանի փողոցներում աղբը հաճախ աննկատ է դառնում, իսկ «Աղբ չթափել» սովորական ցուցանակներն այլևս բավարար ազդեցություն չեն ունենում: Քաղաքացին չի տեսնում իր ճիշտ գործողության անմիջական արդյունքը, և մաքրությունը չի վերածվում ներգրավող վարքագծի:

Առաջարկվող լուծում.
Նախագիծը փողոցում հայտնված աղբը ներկայացնում է որպես «ցուցանմուշ՝ հատուկ ցուցանակով, որտեղ նշվում է դրա քայքայման ժամկետը: Յուրաքանչյուր ցուցանակի QR կոդը քաղաքացիներին միացնում է «Yerevan Pulse» թվային հարթակին, որտեղ մաքրման գործողությունները վերածվում են միավորների:

Ակնկալվող ազդեցություն.
Աղբը դառնում է ուշադրություն գրավող քաղաքային միջամտություն, իսկ մաքրությունը՝ խաղային գործընթաց: Քաղաքացիները հավաքում են միավորներ, իսկ թաղամասերը մրցում են «Ամենամաքուր թաղամաս» կոչման համար՝ ձևավորելով համայնքային ներգրավվածություն և պատասխանատվություն:

Նորարարական մոտեցում.
Նախագիծը համադրում է քաղաքային սարկազմը, QR տեխնոլոգիան և գեյմիֆիկացիան: Թվային հարթակը կարող է հավաքել տվյալներ աղտոտվածության «թեժ կետերի» մասին, իսկ քաղաքացիների ակտիվությունը վերածել վարկանիշի և տեսանելի արդյունքի:

Կապը քաղաքային մաքրության թեմայի հետ.
Նախագիծը փոխում է աղբի մասին խոսելու ձևը. այն ոչ թե պարզապես արգելում կամ քննադատում է, այլ ստիպում է նկատել աղբը, հասկանալ դրա ազդեցությունը և մասնակցել քաղաքի մաքրմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՄԱՔՈՒՐ ԵՐԵՎԱՆ ՄՐՑՈՒՅԹ

YEREVAN PULSE

Երևանը ցուցասրահ չէ

Նկարի՛ր աղբը: Մաքրի՛ր:
Միավոր բեր քո թաղամասին:

1 Նկարիր
Աղբ տեսա՞ր: Մի՞ անցիր կողքով:

2 Ճանաչիր
Տես աղբի տեսակը, ժամանակը և տեղը:

3 Մաքրիր
Նկարի՛ր տոյածքը՝ մաքրումից առաջ ու հետո:

4 Ուղարկիր
Վերբեռնի՛ր նկարը կամ մասնակցի՛ր առցանց խաղին:

5 Մասնակցիր
Միավորներ բեր քո թաղամասին:







Մաքուր քաղաք, ակտիվ համայնք

Միացիր քո թաղամասին:
Միասին մաքրենք Երևանը:

YEREVAN PULSE

ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՄԱՔՈՒՐ ԵՐԵՎԱՆ
ՄՐՑՈՒՅԹ